

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2017թ. ՀՀ ՎՁ մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներին ուղղված են եղել բազմաթիվ բանավոր հարցումներ, որոնց պատասխանվել է անմիջապես: Հարցերը վերաբերել են մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների գործունեությանը: Բանավոր հարցումներ են ստացվել նաև մարզպետարանում գործող **թեժ գծով՝ +374 281 2 25 57** հեռախոսահամարով:

Իսկ ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից մարզպետարանին արվել է 14 գրավոր հարցում, որոնց բոլորին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրվել են պատասխաններ: Անպատասխան մնացած հարցումներ չեն եղել:

2017 թ. մարզպետարան դիմած քաղաքացիների դիմում-բողոքների վերաբերյալ ամփոփ-տեղեկանքը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքէջի <Քաղաքացիների ընդունելություն> բաժնի <Ընդունելության արդյունքները եռամսյակային և կիսամյակային կտրվածքով> ենթաբաժնում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին